ՀԱՐՈՒԹՅՈՒՆ-ՄԱՐՏԻՐՈՍ ՊՈՅԱՃՅԱՆ (ԺԻՐԱՅՐ)

Հ. Մ. ՊՈՂՈՍՅԱՆ

1894 թ. մարտի 24-ին Թուրքիայի Անկուրիայի վիլայեթի վարչական կենտրոն Յոզղատ գյուղաքաղաքի Սահաթհանե հրապարակը լի էր գյուղաքաղաքի և շրջակա գյուղերի բնակիչներով, զինվորականներով ու ոստիկաններով։ Հրապարակում երևում էր Մարտիրոս-Հարություն Պոյաճյանին (Ժիրայր) կախելու համար նոր պատրաստված կախաղանը[1]։ Թուրքական ոստիկանությունն ինքը չէր, որ ձեռք էր գցել դատապարտյալին։ Մինչ այդ, ոստիկանությունը բանտարկել էր տեղի 850 մտավորականների, արհեստավորների, առևտրականների, գյուղացիների և նետել զնդանները։ Բանտերում սկսվեցին այդ անմեղ մարդկանց չտեսնված խոշտանգումները։ Թուրքական բռնակալության դեմ պայքարի ելած անորսալի Ժիրայրը տեսնելով, որ պատճառ է դառնում հարյուրավոր անմեղ մարդկանց ու նրանց ընտանիքների տառապանքին, որոշեց լեռներից իջնել Թերզիլի գյուղ և հանձնվել իշխանություններին։

Յոզղատը կառուցված էր մի ընդարձակ ձորի երկու լանջերի վրա։ Նրա բնակիչների կեսը՝ մոտ 10 հազարը, հայ էին։ Այդ գավառում կար 42 հայկական գյուղ։ Յոզղատում XIX դ. վերջերին կար երեք հայկական դպրոց՝ 832 աշակերտներով[2]։

16 օր տևած դատավարության ժամանակ Ժիրայրն իր ելույթներում դատապարտեց օսմանյան դաժան ռեժիմը և ցույց տվեց, որ թուրքական անագորույն լծի տակ տանջվում են ոչ միայն հայերը և մնացած քրիստոնյա ժողովուրդները, այլև միլիոնավոր մահմեդականներ։ Դատարանում Ժիրայրը հայտարարեց. «Մեր դատը՝ դատն է այս երկրին, ժողովրդին ու հայրենիքին ավերումը փութացնող վարչաձևին փոփոխման։ Միլիոնավոր իսլամ և քրիստոնյա անմեղներ կը տառապին անարդար օրենքներու տակ։ Մեր նպատակն է ազատել անհատի հոգին և ստացվածքը կեղեքումե և հարձակումե։ Դատարաններու մեջ եղած անարդարությունը և կաշառակերությունը խեղճ ժողովուրդը ենթարկած է թշվառության և ստրկության»[3]։

Ժիրայրի և նրա համախոհների (որոնց մեջ կային այլ ազգերի ներկայացուցիչներ) նպատակն էր բարելավել ոչ միայն հայերի, այլև ամբողջ ժողովրդի, սոցիալ-քաղաքական վիճակը։ Հայ քահանային, որը գնացել էր Ժիրայրի մոտ կրոնական վերջին արարողությունը կատարելու, Ժիրայրն ասել էր. «Տեր հայր, ազգիս ղավակներուն ըսեք՝ ինձի համար թող չտրտմին. առանց երկյուղի՝ սրբազան գործի առաջացումին թող աշխատին։ Ես ազգիս և հայրենիքիս հանդեպ ունեցած պարտքս կատարեցի։ Խիղճս հանգիստ է. ժողովրդիս սրտին մեջ ազատության, եղբայրության և հավասարության սերմերը ցանեցի։ Ուշ կամ կանուխ՝ անոնց պտուղը պիտի տեսնվի և այն ատեն արդարությունն ու ճշմարտությունը հայտնվելով՝ ինձի պես զոհերը վարձատրված պիտի ըլլան»[4]։

Մահապատժից առաջ նրան հարց են տալիս, թե ցանկանո՞ւմ է որևէ բան ասել։ Ժիրայրը պատասխանում է, որ ուզում է ելույթ ունենալ և հրապա-

---

1 Հ. Պողոսյան, Հաճընի ընդհանուր պատմությունը և շրջակա Գողան-Տաղի հայ գյուղերը, Լոս Անճելս, 1942, էջ 546։

2 Ս. Էփրիկյան, Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, գիրք Ա, Վենետիկ, 1902, էջ 719։

3 Պատմություն Ս. Դ. հնչակյան կուսակցության, հ. Ա., Պեյրութ, 1962, էջ 103։

4 Նույն տեղում։

բակում հավաքված լուռ ու մտամոլոր ամբոխի ներկայությամբ սկսում է տիրող կարգերի անխնա քննադատությունն ու մերկացումը։ Թուրքական աստիճանավորները նրա վերջին խոսքը խանգարելու նպատակով նվագախմբին կարգադրում են նվագել։ Չնայած դրան, Ժիրայրը շարունակում է իր ճառը։ Ճառի ավարտից հետո Ժիրայրն ինքն է իր պարանոցին հագցնում օղակը, ապա ոտքով հրում է աթոռը և կախվում։ Առավոտյան նրա դին տանում են դեպի հայկական եկեղեցի, սակայն առաջնորդը մերժում է ընդունել։ Մարմինը տանում են բողոքականների գերեզմանատուն և նրանից 20—30 քայլ հեռավորության վրա հանձնում հողին։ Որոշ ժամանակ անց Ժիրայրի դին փոխադրվում է նրա ընկերներից մեկի բակը, իսկ երբ այդ ընկերը մեկնում է Ամերիկա, տարվում է մի ուրիշ ընկերոջ բակ։ 1908 թ., երբ Թուրքիայում տեղի ունեցավ երիտթուրքերի հեղաշրջումը, Ժիրայրի աճյունը հանդիսավոր կերպով հանվում է հողից, տարվում հայկական եկեղեցու բակն ու թաղվում այնտեղ։

Այժմ համառոտակի Ժիրայրի կյանքի և գործունեության մասին։ Կիլիկիայի հայկական լեռնային Հաճըն քաղաքի բնակիչ Հակոբի և նրա կին Սառայի ընտանիքի ծնունդ էին Հարություն-Մարտիրոս Պոյաճյանը (1856 թ.) և Համբարձում Պոյաճյանը (Մեծ Մուրադ կամ Սասունի Մուրադ)։ Վերջինս գլխավորեց 1894 թ. Սասունի հերոսական ինքնապաշտպանությունը, որի ավարտից հետո ստացավ 101 տարի բանտարկություն և 14 տարի բանտում նստելուց հետո, 1908 թ. դարձավ օսմանյան պառլամենտի անդամ, իսկ 1915 թ. կախաղան հանվեց։ Մուրադի մասին է հորինվել «Պարզիր աղբյուր» երգը, որը ժողովրդի կողմից երգվում է նաև մեր օրերում։ Ընտանիքի երրորդ երեխան Պոյաճյան Հայկանուշն էր, որը նույնպես մխրճվեց օսմանյան տիրապետության դեմ պայքարի ոլորտը։ Հայկական այս ընտանիքն իրավացիորեն համարվել է «արդարության, ազատության և մարդկության երջանկության համար պայքարողներու, անձնազոհերու բույն... հերոսներու գերդաստան»[5]։

Ժիրայրն իր կարճ և բովանդակալից կյանքի ընթացքում կոչվել է բազմաթիվ անուններով. Երզնկայի մեջ՝ Շահեն Խուտուլյան, Բինկյանում՝ Տիար, Տիվրիկում՝ Վասակունի, Կեսարիայում՝ Հազարաշահ և Մորուք, Գալուստ և այլն։ Սկզբնական կրթությունը ստացել է ծննդավայրի Վարդանյան դպրոցում, որը բացվել էր Կոստանդնուպոլսում ստեղծված Վարդանյան ընկերության ջանքերով։ Դպրոցը, որի առաջին տնօրենն էր Միհրան Սվաճյանը, աշակերտներին տալիս էր ձրի դպրոցական պիտույքներ և դասագրքեր։ Այն երկսեռ էր և ուսուցումը տարվում էր նոր մեթոդներով ու աշխարհաբար լեզվով։ 1872 թ. Ժիրայրը 3 տարվա ուսումնառությունից հետո դպրոցն ավարտում է և մեկնում Կոստանդնուպոլիս, ուր երկու տարի սովորելուց հետո վերադառնում է հայրենի Հաճըն և աշխատում Վարդանյան դպրոցում, որպես ուսուցիչ։ Հայրենի գյուղաքաղաքի դպրոցում Ժիրայրը ստեղծում է մի կազմակերպություն, որի անդամները պետք է լինեին խիստ գաղտնապահ և ստորագրեին հետևյալ երդմնագիրը. «Ազգիս փրկության համար կամավոր զինվոր գրվեցա և ի հարկին կյանքս զոհելու պարտական եմ»[6]։

Որոշ ժամանակ անց նա նորից Կոստանդնուպոլսում էր, ապա «հոն երթալեն հետո երկար ատեն կաներևույթանա, և տարիներ հետո երևան կուգա, որ Կ. Պոլսեն Ռուսիա անցած և հոն 14 տարիներ ապրելով վարակված է հեղափոխական գաղափարներով»[7]։ Վերլուծենք վերը բերված քաղվածքը։ Ինչպես ասվեց, նա առաջին անգամ Կոստանդնուպոլիս է մեկնել 16 տարեկան հասակում՝ 1872 թ., երկու տարի այնտեղ ուսանելուց հետո՝ 1874 թ. վերա-

---

5 Սիրվարդ, Մեծն Մուրատ (Համբարձում Պոյաճյան) կյանքն ու գործունեությունը, Փրավիտենս, 1955, էջ 13։

6 Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 544։

7 Նույն տեղում։

դարձել է հայրենի գյուղաքաղաք, մեկ տարի տեղի դպրոցում աշխատելուց հետո գնացել է Կ. Պոլիս, երբ 19 տարեկան էր։ Ապա անցել է Ռուսաստան և վերադարձել է 14 տարի հետո, երբ 33 տարեկան էր, կախաղան է հանվել 38 տարեկան հասակում։ Այսպիսով, մոտավոր հաշիվներով Ժիրայրը Ռուսաստան է գնացել 1875 թ., վերադարձել է 1889 թ.։ Նշանակում է, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրյակին, ընթացքում և հետո նա եղել է Ռուսաստանում։ Ցավոք, մենք տեղեկություն չունենք, թե նա Ռուսաստանի որ վայրերում է եղել, ինչպիսի կազմակերպությունների է հարել և ինչով է զբաղվել։

Ռուսաստանից վերադառնալուց հետո Ժիրայրը գնում է Երուսաղեմ, ապա Հաճընում աշխատում իբրև ուսուցիչ։ 1889 թ. նա ստիպված թողնում է Հաճընը, քանի որ այդտեղից թուրքական իշխանությունները քառասունութ հոգու տանում են Ադանա՝ բանտ նետում, սակայն բոլորն էլ հետ են վերադառնում՝ «կաշառք տալով»[8]։ Հաճընից հետո նա Սոյուտլու գյուղում հովիվ էր, որտեղ քարոզում էր, թե «հայը չէ միայն, որ կտանջվի բռնության ղեղթաներուն տակ։ Անոր հետ կը հարստահարվին նաև թուրք, քուրդ, չերքեզ աշխատավորները, գյուղացիները և բանվորները, որոնք բռնապետության դեմ պայքարի մեջ կրնան բնական դաշնակիցներ ըլլալ հայերուն։ Պետք է մտնել անոնց մեջ, քարոզել, լուսաբանել մտքերը, փարատել տգիտությունը»[9]։

1889 թ. Ժիրայրը Գրգաղաճ գյուղի դպրոցում ուսուցիչ էր։ 150 հայ ընտանիք ունեցող այդ գյուղը թրքախոս էր, իսկ դպրոցում երեխաները գրել և կարդալ էին սովորում «հայերեն գրերով և թուրքերեն լեզվով»[10]։ Ժիրայրն անմիջապես ձեռնամուխ է լինում աշակերտներին հայերեն սովորեցնելու գործին, միաժամանակ դասավանդում է հայոց պատմություն, աշխարհագրություն և մարմնամարզություն։ Նա աշակերտներին ուսուցանում է նաև հայերեն երգեր։ Սակայն շատ չանցած, հետապնդվելով թուրքական ոստիկանության կողմից, թողնում է այդ գյուղը և տեղափոխվում հայաշատ Այնթապ քաղաքը, որը Հալեպի (Բերիա) կուսակալության գավառներից մեկի կենտրոնն էր։ Ժիրայրը Այնթապից գնում է Տեորթ Յոլ (Զոք Մարզվան), որտեղ զբաղվում է ուսուցչությամբ։ Աշակերտներին դասեր տալուց բացի նրանց «զինվորական մարզանք կը սովրեցնե»[11]։ Շուտով նա այստեղ դառնում է կասկածելի անձնավորություն և ստիպված մեկնում Ադանա, որի բնակիչներից 13 հազարը հայեր էին։ Այստեղից նա նորից հայտնվում է Հաճընում. «ուր կը տեղավորե իր աշակերտներուն մտքերուն մեջ հեղափոխական սերմերը»[12]։ Խուսափելով բանտարկությունից, նա գնում է Էվերեք, ապա Ենիճե. Թոմարզա, Զոմագլը, Կեսարիա, Յոզղատ, Տիվրիկ, Բինկյան (Բենկյ), Երիզա և այլ վայրեր։ Երիզայի և Բինկյանի դպրոցներում նա դասավանդում է աշխարհագրություն, հայոց պատմություն, բնագիտություն և այլ առարկաներ։ Աշակերտներին տանում է լեռները, նրանց սովորեցնում է քարտեզագրություն, մարմնամարզություն և զինավարժություն։ Բինկյանում Ժիրայրը լայն աշխատանք է ծավալում բնակիչների շրջանում։ Այս գյուղը Փոքր Հայքի (Ակնի) այն գյուղերից էր, ուր պարարտ հող կար ազատագրական շարժման գաղափարների ծավալման համար, քանի որ տեղացիները հուշակված էին իրենց քաջությամբ, ունեին ընտիր նժույգներ և քաջավարժ հեծյալներ էին։ Այդ գյուղից նա անցնում է Խուռնավիզ և նկատում, որ գյուղի բնակիչներն անասելի չափերով կեղեքվում են։ Ժիրայրը ժողովրդին

---

8 Սիրվարդ, Խորհրդավոր հեղափոխականը, անմահ Ժիրայր, իր կյանքն ու գործունեությունը, Փարիզ, 1953, էջ 15։

9 Նույն տեղում, էջ 19։

10 Նույն տեղում, էջ 73։

11 Հ. Պողոսյան, նշվ. աշխ., էջ 54։

12 Նույն տեղում, էջ 545։

սկսում է նախապատրաստել ընդդեմ հարստահարողների։ Նրա քարոզները հայ գյուղացիներից անցնում են նրանց «բախտակից Թուրքերուն վրա»[13]։

Հետաքրքրական են Սինճան գյուղի դեպքերը։ Գյուղում ապրում էին 35 տուն հայեր և 40 տուն Թուրքեր։ Գյուղը պատկանում էր կալվածատեր Օսման բեյին, որին Ժիրայրը սկսում է համոզել, որպեսզի Թեթևացնի աշխատավոր հայերի և Թուրքերի հարկերը, սակայն կալվածատերը մնում է անհողդողդ։ Ժիրայրի դրդմամբ հայ և Թուրք գյուղացիները միանալով բեյին են ներկայացնում իրենց պահանջները։ Իմանալով այդ մասին, Սինճանի գյուղացիներին են միանում շրջակա 7 գյուղերի հայ և Թուրք բնակիչները։ Վախեցած կալվածատերը դիմում է կառավարությանը, սակայն գյուղ եկած զինվորական ուժերը տեսնելով «երկու ժողովուրդներուն համերաշխություն կընկճին և չեն կրնար որոշում մը առնել»[14]։

Սինճանից Ժիրայրը անցնում է Տեորթ Յոլ, որտեղ իր քրոջ՝ Հայկանուշի հետ զբաղվում է ուսուցչությամբ։ Որոշ ժամանակ անց նա տեղափոխվում է Յոզղատի գավառի Թերզիլի, Պուրուն Քշլա, Քելեր և այլ գյուղեր։ Ապա հաստատվում է Չոմաք դաղի անառիկ Փյոհրենկ գյուղում։ Ժիրայրը այդ գյուղերի բնակիչներին մղում է դեպի ինքնապաշտպանություն։ Փյոհրենկում նա ծանոթանում է Թաթ Աբդուլլահի հետ և նրան հաղորդակցում իր գաղափարներին։ Նրանք այնքան են մտերմանում, որ Աբդուլլահն իր բնակարանը տրամադրում է Ժիրայրին՝ որպես Թաքստոց։ Նրան է հետևում Թաթերի շեյխ Հաճի Պեկթաշը[15]։

Այդ ժամանակաշրջանում Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում գործում էր Նաև Արամ Աշըգպաշյանը, որի և Ժիրայրի հանդիպումը տեղի է ունենում Սև ծովի ափին գտնվող Օրտու նավահանգստային քաղաքում։ Այստեղ Ժիրայրը և Արամը հանդիպում են Թուրք Շյուքրիի և քուրդ Սլոյի հետ, որոնք Կոստանդնուպոլսի զինվորական դպրոցի սաներ էին։ Սլոն Ժիրայրին ասել է. «Միակ տարբերությունը իմ կարծիքով, հայ ժողովրդին և Թուրք ու քուրդ ժողովուրդներուն այն է, որ վերջիններու ազգային գոյությունը վտանգված չէ, բայց անոնք ալ հոգեպես, մտավորապես և տնտեսապես գերի են մեծ և փոքր կալվածատերերու և վաշխառուներու»[16]։

Իր պրոպագանդիստական աշխատանքների ժամանակ Ժիրայրը հաճախ էր ասում իր համախոհներին. «Մեր երկրին մեջ տիրող ռեժիմը մահացու վտանգ մըն է անոր մեջ ապրող ազգերու հավասարապես։ Հայ, Թուրք և քուրդ հասարակ ժողովուրդը կը տառապի իշխողներու կրունկին տակ։ Պետք է գիտակցության բերել ժողովուրդը»[17]։ Միաժամանակ Ժիրայրը հայերին հորդորում էր, որ յուրաքանչյուր ոք պետք է «սիրե հայերենը, մանավանդ իմաստասիրե մեր ազգային անցյալ և ներկա պատմությունը. այն ատեն պիտի համոզվիս, թե հայը աշխարհի համար ապրած է և հավիտյան իրավունք ունի»[18]։ Ամենուր, որտեղ եղել է Ժիրայրը, իրեն հարող երիտասարդներին տվել է հետևյալ երդմնագիրը. «Առաջի Աստծո և սեղանոյս ամենայն անկեղծությամբ կերդնումք Հայկական Հեղափոխական միության նպատակին ծառայել, մեր գիտակցության տակ ինկած ամեն ինչ մինչև ի գերեզման գաղտնի պահել և միության կեդրոնական մարմինեն մեզ հրամայված բոլոր հրամանները տառապես և վայրկենապես գործադրել, եթե անոնք ըլլան անձնազոհություն իսկ. անձնուրաց եմք և վասն ազատության բռնապետական ժա-

---

13 Պատմություն Ս. Դ. հնչակյան կուսակցության, հ. Ա, էջ 98։
14 Նույն տեղում, էջ 99։
15 Նույն տեղում, էջ 100։
16 Սիրվարդ, Արամ Աշրդպաշյան, Փրավիտենս, 1957, էջ 70։
17 Նույն տեղում, էջ 71։
18 Սիրվարդ, Խորհրդավոր հեղափոխականը..., էջ 3։

նիքեն, մեր արյան մինչև վերջին կաթիլը այս սուրբ գործին տրամադրած եմք. Աստված գուն տուր մեզի կարողություն և օգնական մեզ լեր»[19]։

Շուտով Ժիրայրի նկատմամբ կառավարության հալածանքներն ուժեղանում են և նա ստիպված անցնում է Պողուզի շրջան ու գործում Հազարաշահ անունով։ 1892 թ. Փոքր Ասիայի 82 քաղաքներում փակցվեցին Թուրքիայի պատմության մեջ առաջին թռուցիկները, որոնք խմբագրված էին Ժիրայրի և Հակոբ Պահլավունու կողմից։ Դրանցից մեկի մեջ ասված է. «Օսմանցիներ, հասած են վերջին օրերը բռնակալ Արդուլ Համիդի, որ անպատված է իսլամական անունը և կեղտոտած՝ օսմանի նվիրական գահը։ Այդ բռնակալը հափշտակած է կայսրությունը և ավերած է մեր սիրելի հայրենիքը և ինքզինք կառավարության գլուխ պահելու համար՝ կը հոսեցնե ամենալավ հայրենասերներու մաքուր արյունը։ Այդ անիրավ գործերուն համար վրեժխնդրության ձայնը մինչև երկինք բարձրացած է։ Գործելու ժամը հասեր է։ Իսլամի միլիոնավոր հավատարիմները, որոնք ազատ կերպով և հառաջադիմելով կապրին, ուրիշ ուժեղ կառավարության մը ձեռքին տակ, մեզի օգնության կուգան։

Քաջ եղեք»[20]։

Մեր կարծիքով ուրիշ ուժեղ կառավարություն ասելով Ժիրայրն անպայման ի նկատի է ունեցել Ռուսաստանը, որտեղ անցել էին նրա կյանքի 14 տարիները։

Հայտնի է, որ Կիլիկիայի հայկական թագավորության անկումից հետո բնակչության մի մասը բարձրացավ դեպի Զեյթունի ու Հաճընի լեռները և հարատևեց այնտեղ։ Ժողովրդի մի փոքրիկ հատված թողնելով հայրենի Կիլիկիան, բնակություն հաստատեց Սեբաստիայից դեպի արևմուտք ընկած մի ձորի մեջ, որտեղ շատ հին ժամանակներից սկսած՝ կար մի կամարակապ աղբյուր, որի անունով էլ գյուղը կոչվեց Կեմերեկ։ Հենց այս գյուղում էլ սկսեց իր հեղափոխական աշխատանքը Ժիրայրը, ունենալով իր համախոհը՝ կեմերեկցի մտավորական Հակոբ Պահլավունուն։ Նրանց աշխատանքի մասին գրքերից մեկում ասված է. «Ժիրայր և Պահլավունի տառապող և հարստահարվող գյուղացիներու մեջ երբեք խտիր չէին դներ։ Հայ, ասորի, թուրք, բուրդ և չերքեզներ բոլորին ալ բարեկամ էին՝ և այս վերջիններն ալ իրենց կարգին՝ պաշտամունքով կը հետևեին այս առաքյալներու ազատաշունչ գաղափարներուն և փրկարար ցուցմունքներուն»[21]։

Հայ հայդուկների համար շատ կարևոր վայր էր Թելասից ոչ շատ հեռու գտնվող Տերեվանքը, որի վանահայր Դանիել վարժապետը Ժիրայրի ամենաջերմ համախոհներից էր և «գրեթե յուրաքանչյուր գյուղի մեջ կը հանդիպի Ժիրայրին և անկե կտանա հրահանգ և կազմակերպության մասին տեղեկություն և զանոնք կը փոխադրե խումբերու պետերուն, երբ անոնք որպես «ուխտավորներ» վանք կայցելեին»[22]։ 1892 թ. այդ վանքում Ժիրայրը հավաքեց հայդուկներին։ Որոշվեց նրանց բաժանել երեք խմբի. դրանցից առաջինը գործելու էր Թորոս Տառուկյանի (Մեծ Չելլո) գլխավորությամբ՝ Կեսարիայի շրջանում, երկրորդը՝ Միրիջանի ղեկավարությամբ Հալեպի, և երրորդը՝ քենիքմացենցի Վարդոյի գլխավորությամբ՝ Սեբաստիայի շրջանում։ Խմբերի ընդհանուր ղեկավարն էր Ժիրայրը, որը «մերթ ոստիկանի, մերթ քուրդ ցեղապետի, մերթ դերվիշի տարազներով, ծպտված, խումբերու պետերուն կը հաղորդեր այն բոլոր տեղեկությունները, որոնց պետք ու-

---

19 Նույն տեղում, էջ 51։

20 Գր. Գալուստյան, Մարաշ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1934, էջ 733, Կ. Գալուստյան եւ Ն. Գաբրիկյան, Ազ-տաղի քառամյա գոյամարտը, Մարսելլ, 1932, էջ 13։

21 Կ. Գալուստյան եւ Ն. Գաբրիկյան, Ազ-տաղի քառամյա գոյամարտը, էջ 12։

22 Միրվարդ, Թորոս Տառուկյան (Մեծ «Հելլո»), Փրավիտենս, 1960, էջ 41։

նեին[23]։ Այդ ժամանակներում Սեբաստիայի և Գաղատիայի շրջաններում կային հայդուկներ, որոնք իրենց անվանում էին «Զելլո»։ Նրանց խումբը սկզբում բաղկացած էր Թուրքական իրականությունից դժգոհ լազերից և Թուրքերից։ Խմբի ղեկավարն Ասադ Զուրլին էր, որի անունն աղավաղելով ժողովրդի մեջ ստացել էր Զելլո ձևը։ Խումբը սկզբից սկսեց սարսափի մեջ պահել ժողովրդին, սակայն երբ նրա մեջ թափանցեցին հայեր, հարվածն ուղղեց հարուստների ու Թուրքական պաշտոնյաների դեմ և սկսեց իր ձեռք բերածը բաժանել աղքատներին։ Ժիրայրի խորհրդով խումբը Թուրքերի ուշադրությունը հայերից հեռացնելու նպատակով իրեն անվանում էր Զելլո։ Մի հավաքի ժամանակ Ժիրայրն ասել է. «ասպատակներու նպատակը չէ միայն պատուհասել բռնակալները, այլ գլխավորապես նպաստելն է հեղափոխական գիտակցության, ինքնապաշտպանական ոգու զարգացման և արծարծման ժողովուրդին մեջ»[24]։

Հետաքրքրական է Ժիրայրի նախաձեռնությամբ Յոզղատում կազմակերպված հավաքը, որի նախօրյակին նա իր ընկերներին ուղարկում է հետևյալ նամակը. «1893 հոկտեմբերի 29-ին, երեքշաբթի, ցերեկը եկեղեցիին զանգակները զարնել տալ և ժողովուրդը եկեղեցի հրավիրել։ Կառավարության կամ պաշտպոզուքներու կողմե դիմադրություն ըլլալու պարագային՝ զենքով փոխադարձնել։ Ժողովրդի միջեն ծերեր, կիներ և մանուկներ պետք է առաջանան դեպի կառավարչատուն և բողոք ներկայացնեն կառավարիչին»[25]։

Հավաքում կարդացված հուշագրում, որը կազմել էր Ժիրայրը, մերկացվում էին Թուրքական ոստիկանների և հարկահանների անօրինակ կեղեքումները, որոնք անթիվ ու անհամար էին Թուրքիայի գյուղերում։ Յոզղատում հավաքը տեղի ունեցավ նշված եկեղեցում։ Իմանալով այդ հավաքի մասին, այնտեղ է գալիս Թուրք փաշան և ժողովրդին ցրելու նպատակով խոստանում է կատարել նրա պահանջները։ Սակայն հաջորդ օրը սկսվում են հարյուրավոր մարդկանց բանտարկությունները։

1905 թ., երբ հայ ժողովրդական հերոս Անդրանիկը ծնևում էր, ծանոթանում է բանաստեղծ Սիամանթոյի հետ, որը ներշնչվելով Արևմտյան Հայաստանում և մնացած վայրերում եղած հայդուկային շարժման մասին հերոսի պատմածներից, գրեց մի բանաստեղծություն, որի մեջ գովերգեց նաև Ժիրայրին և այլոց։

Ժիրայրի մասին գրվեցին բանաստեղծություններ, ողբերգություններ և շատ հոդվածներ ու գրքեր։ 1908 թ. երիտԹուրքերի հեղաշրջումից հետո Հմայակ Արամյանցը գրեց «Անմահ Ժիրայր կամ մեծ հեղափոխականը» ողբերգությունը, որը բեմադրվեց Կոստանդնուպոլսում՝ Վահրամ Փափազյանի դրամատիկական խմբի կողմից։ Ժամանակի մամուլում այդ ողբերգության ներկայացումների մասին տպվեցին հաղորդումներ, որոնցից մեկում ասված է. «Թատրոնը ծայրե ի ծայր լեցուն էր ամեն դասակարգի խուռն բազմությամբ երկու սեռեն»[26]։

Վերը նշված այդ ողբերգությունը 1913 թ. հուլիսի 6-ին բեմադրվեց նաև ԱՄՆ-ում՝ Ուստրում։ Պիեսում Ժիրայրը հանդես է գալիս ոչ միայն հայերի, այլև «ամեն տանջվող մարդկության՝ Թուրքերու, քուրդերու և համաերկրացիներու եղբայրական համակենցաղը կերտելու նպատակով, ազատությունը սևեռակետ ունենալով»[27]։

Ամփոփենք։ Ժիրայրը հայ ազգային-ազատագրական շարժման այն գործիչներից է, որը ժողովրդի մեջ հեղափոխական աշխատանք էր տանում

---

23 Նույն տեղում, էջ 47։

24 Նույն տեղում, էջ 45։

25 Պատմություն Ս. Դ. հնչակյան կուսակցության, հ. Ա, էջ 101։

26 Կոհակ, Կ. Պոլիս, 21. III. 1911, էջ 130։

27 Նույն տեղում, 4. VIII. 1913, էջ 403—404։

հայկական իրականության մեջ ազգային կուսակցությունների ստեղծման սկզբնական տարիներին։ Նա առաջադրել է ոչ միայն հայերի, այլև Թուրքիայում ապրող բոլոր ժողովուրդների ազատության հարցը։ Իրավացի է Զարուհի Գալեմքյարյանը, երբ Ժիրայր և Մուրադ եղբայրների մասին գրում է. «Ճշմարիտ հայ կուրծքերը կուռին հպարտությամբ, երբ կը կարդան Ժիրայրի և Մուրադի, երկու եղբայրներու դյուցազնական ապրումները»[28]։

АРУТЮН-МАРТИРОС ПОЯДЖЯН (ЖИРАЙР)

А. М. ПОГОСЯН

Резюме

Жирайр является одним из видных представителей национально-освободительного движения. Начальное образование получил в родном Аджне, впоследствии учился в Константинополе. После учебы работал учителем в Аджне. Из-за своих свободолюбивых настроений и деятельности с этого времени он подвергался гонениям со стороны турецких властей. После этого он покинул Турцию и 14 лет прожил в России. По возвращении из России в 1889 г. Жирайр вел активную пропагандистскую работу не только среди армян, но и других угнетенных народов Османской Турции (таты, курды и др.), руководил гайдукским движением. В основном действовал в районах Киликии и Себастии. Во имя спасения соотечественников от мести турецких карателей он добровольно сдался османским властям, повесившим его в Йозгате 24 марта 1894 г. Однако эта акция турецких палачей была бессильна приостановить народную борьбу: в Западной Армении в беспрецедентных масштабах развернулась освободительная борьба..

HARUTUNE-MARTIROS POYAJIAN (ZHIRAIR)

POGHOSIAN A. M.

Summary

Zhirair is one of the distinguished representatives of the national liberation movement. He received elementary education in his native Hajin, subsequently he studied in Constantinople. After graduation he worked as a teacher in Hajin. Because of his freedom-loving frame of mind and activity beginning at this time he was subjected to persecution by the Turkish authorities. Later he left Turkey and lived in Russia for 14 years. Returning from Russia in 1889 Zhirair carried on active propaganda not only among Armenians but also among other oppressed peoples of the Ottoman Empire (Tats, Kurds and others). He led the haidook (guerrilla) movement. He mainly acted in the regions of Cilicia and Sebastia. So as to spare his countrymen the revenge of Turkish punishers he voluntarily surrendered to the Ottoman authorities that hanged him in Yozgat on the 24th of March, 1894. However, that action of he Turkish authorities was powerless to stop the popular fight; the guerrilla liberation movement propagated in West Armenia in unprecedented measures.

---

28 Զարուհի Գալեմքյարյան, Օրեր և դեմքեր, Երևան, 1965, էջ 221։